ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 30-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է՝*

1. Հաստատել 2021 թվականի սեպտեմբերի 01-ի N 06 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Բարեկամության հրապարակի թիվ 5/1 հասցեում գտնվող արհեստական լիճը, հարթակները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին.

3) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Երևանյան փողոցի թիվ 1/100/2 հասցեում գտնվող հողամասը Կորյուն Անդրեասյանին ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու մասին.

4) Ալեքսան Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.

5) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Օգոստոսի 23-ի փողոցի 7-րդ շենքի թիվ 512 բնակարանն անհատույց օտարելու մասին.

6) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրակացարանային թաղամասի 6-րդ շենքի թիվ 65 բնակարանն անհատույց օտարելու մասին.

7) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրակացարանային թաղամասի 2-րդ շենքի թիվ 89 բնակարանն անհատույց օտարելու մասին.

8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 423 բնակարանն անհատույց օտարելու մասին.

9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 428 բնակարանն անհատույց օտարելու մասին.

10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 508 բնակարանն անհատույց օտարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 31-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 77-Ն որոշմամբ հաստատված N 3, N 4 և N 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի
սեպտեմբերի 01-ի N 31-Ն որոշման

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի 77-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N3, N4 ԵՎ N7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հաստատված բյուջե			Փոփոխություններ	Ճշտված բյուջե		
					Ընդամենը	վարչական մաս	ֆոնդային մաս		Ընդամենը	վարչական մաս	ֆոնդային մաս
2000	X	X	X	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**	2 338 830.0	1 893 694.3	445 135.7		2 338 830.0	1 893 694.3	445 135.7
2400	4	0	0	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝**	17082.0	x	17 082.0	-51 700.0	-34 618.0	x	-34 618.0
2450	4	5	0	Տրանսպորտ, որից՝	449 183.0	x	449 183.0	+240 650.0	689833.0	X	689 833.0
2451	4	5	1	ճանապարհային տրանսպորտ,որից՝	449 183.0	x	449 183.0	240 650.0	689833.0	X	689 833.0
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)	437 245.0	x	437 245.0	+235 000.0	672245.0	x	672 245.0
				Նախագծահետազոտական ծախսեր (5134)	10 938.0		10 938.0	+5 650.0	16588.0	X	16 588.0
2490	4	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	-445 496.7	x	-445 496.7	-292 350.0	-737846.7	X	-737 846.7
2491	4	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	-445 496.7	x	-445 496.7	-292 350.0	-737846.7	X	-737 846.7
				Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր, որից՝	-445 496.7	x	-445 496.7	-292 350.0	-737846.7	X	-737 846.7
				Հողի իրացումից մուտքեր	-301 614.3	x	-301 614.3	-292 350.0	-593 964.3	x	-593 964.3
2600	**6**	**0**	**0**	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝**	**256 269.7**	**102 000.0**	**154 269.7**	**-27000.0**	**229 269.7**	**102 000.0**	**127 269.7**
2610	6	1	0	Բնակարանային շինարարություն, որից՝	149344.3	81000.0	68 344.3	+10 000.0	159 344.3	81 000.0	78 344.3

2611	6	1	1	Բնակարանային շինարարություն	149 344.3	81 000.0	68 344.3	+10 000.0	159 344.3	81 000.0	159 344.3
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)	59 490.5	x	59 490.5	+10 000.0	69 490.5	x	69 490.5
2640	6	4	0	Փողոցների լուսավորում	106 925.4	21 000.0	85 925.4	-37 000.0	69 925.4	x	69 925.4
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)	74 165.5	x	74 165.5	-37 000.0	37 165.5	x	37 165.5
2800	**8**	**0**	**0**	**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, այդ թվում՝**	**111 709.8**	**30 000.0**	**81 709.8**	**+27 000.0**	**138 709.8**	**30 000.0**	**108 709.8**
2810	8	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝	69 709.8	4 000.0	65 709.8	+27 000.0	96 709.8	4 000.0	92 709.8
2811	8	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝	69 709.8	4 000.0	65 709.8	+27 000.0	96 709.8	4 000.0	92 709.8
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)	63 180.7	x	63 180.7	+27 000.0	90 180.7	x	90 180.7
2900	**9**	**0**	**0**	**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**	**810 115.5**	**772 000.0**	**38 115.5**	**+51 700.0**	**861 815.5**	**772 000.0**	**89 815.5**
2910	9	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝	525 350.0	517 000.0	8 350.0	+51 700.0	577 050.0	517 000.0	60 050.0
2911	9	1	1	Նախադպրոցական կրթություն	525 350.0	517 000.0	8 350.0	+51 700.0	577 050.0	517 000.0	60 050.0
				Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)	950.0	X	950.0	+51 000.0	51 950.0	X	51 950.0
				Նախագծահետազոտական ծախսեր (5134)	2 400.0	x	2 400.0	+700.0	3 100.0	X	3 100.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 32-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԹԻՎ 5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼԻՃԸ, ՀԱՐԹԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի գրությունը (մուտք՝ 2019 թվականի մայիսի 29-ի N Պ-898) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրությունը (մուտք՝ 2019 թվականի օգոստոսի 5-ի N Պ-1379), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ի 04112019-07-0107 սեփականության վկայական) Բարեկամության հրապարակի թիվ 5/1 հասցեում գտնվող 419.96 քառակուսի մետր մակերեսով արհեստական լիճը, 3.18 և 14.86 քառակուսի մետր մակերեսներով հարթակները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված 5713.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությանը համապատասխան նշանակությամբ օգտագործելու պայմանով:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 33-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/100/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՈՐՅՈՒՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 51-րդ կետերի, 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 69-Ն և 70-Ն որոշումների և հաշվի առնելով Կորյուն Անդրեասյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հուլիսի 19-ի N Ք-2542), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կորյուն Գառնիկի Անդրեասյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի օգոստոսի 11-ի N 11082020-07-0158 վկայական) Աբովյան քաղաքի Երևանյան փողոցի 1/102 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 358.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 08-ի N 08072021-07-0161 վկայական) Աբովյան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 1/100/2 հասցեում գտնվող 29.3 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով, հողի կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով օտարել Կորյուն Անդրեասյանին:

2. Կորյուն Անդրեասյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել 200 250 (երկու հարյուր հազար երկու հարյուր հիսուն) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կորյուն Անդրեասյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կորյուն Անդրեասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 34-Ա

ԱԼԵՔՍԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, հաշվի առնելով Ալեքսան Հովհաննիսյանի լիազորած անձ Կարեն Դալլաքյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունիսի 01-ի N Ք-2179), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Ալեքսան Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2015 թվականի հուլիսի 02-ի N 02072015-07-0033 վկայական) Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող 1000.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2012 թվականի դեկտեմբերի 04-ի N 04122012-07-0478 վկայական) 4-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի թիվ 10 հասցեում գտնվող 1000.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հետ:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալեքսան Հովհաննիսյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ	ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ	ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ	ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 35-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑԻ 7-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 512 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Մարգարիտ Մովսիսյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2009 թվականի փետրվարի 19-ի N 2630122 վկայական և Աբովյան համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 18-ի N 616 որոշում) Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի 7-րդ շենքի 22.07 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 512 բնակարանն անհատույց օտարել Մարգարիտ Մովսիսյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մարգարիտ Մովսիսյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարգարիտ Մովսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ	ՂԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ	ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ	ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 36-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 65 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Լիլիթ Խեչոյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2008 թվականի օգոստոսի 4-ի N 2534222 վկայական և Աբովյան համայնքի ղեկավարի 2016 թվականի նոյեմբերի 17-ի N 1174 որոշում) Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 6-րդ շենքի 13.6 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 65 բնակարանն անհատույց օտարել Լիլիթ Խեչոյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Լիլիթ Խեչոյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Խեչոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 37-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 89 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Կարինե Ղարիբյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 27122018-07-0083 վկայական) Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 2-րդ շենքի 26.45 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 89 բնակարանն անհատույց օտարել Կարինե և Էլեն Ղարիբյաններին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ	ՂԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ	ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ	ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ	ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 38-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4/1/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 423 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Ռիտա Դուրյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2013 թվականի հունիսի 26-ի N 26062013-07-0056 վկայական) Աբովյան քաղաքի ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի 12.65 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 423 բնակարանն անհատույց օտարել Ռիտա Դուրյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռիտա Դուրյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռիտա Դուրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 39-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4/1/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 428 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Արմեն Գրիգորյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2013 թվականի հունիսի 26-ի N 26062013-07-0012 վկայական) Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամասի 4/1/1 շենքի 17.22 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 428 բնակարանն անհատույց օտարել Արմեն, Մարիամ, Հերմինե, Հռիփսիմե, Ելենա Գրիգորյաններին և Ռուզաննա Սարգսյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՂԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 40-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4/1/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 508 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Արման Աբրահամյանի դիմումը և Աբովյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2013 թվականի հուլիսի 4-ի N 04072013-07-0008 վկայական) Աբովյան քաղաքի ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի 13.4 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 508 բնակարանն անհատույց օտարել Արման Աբրահամյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արման Աբրահամյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Աբրահամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ
ՂԱՋԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՂԱԼԵՉՅԱՆ ԳՈՌ
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ
ՆԱՐԻՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ՉԱՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 01
ք. Աբովյան